

**ԿՐՈՆԱԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ Է. ՖՐՈՄԻ
ՀՈՒՄԱՆԻՏԱԿԱՆ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Գոհար Սարգսյան

Քննության առնելով մարդկային հոգու անհանգստության ֆենոմենը՝ Է. Ֆրոմը մշակեց սեփական բարոյական ուսմունքը: Նա մարդու հոգեկան առողջությունը ուղղակիորեն կապեց մարդու բարոյական որակների հետ՝ բարոյական անկումը և ոչ մարդասիրական վարքը դիտարկելով իբրև հոգեկան հիվանդության պատճառ և հետևանք: Է. Ֆրոմն անխզելի կապ էր տեսնում մարդու հոգեկան առողջության և բարոյական դիրքորոշման միջև: Այդ համոզմունքն էլ հիմք է դառնում պնդելու, թե բժշկությունը ոչինչ չի կարող անել առանց բարոյականության¹: Քննելով նե-

¹ Է. Ֆրոմը համոզված էր, որ երբ մարդը դրսևորում է ծայրահեղ դաժան, հակահումանիստական վարքագիծ, զուրկ է ներքին բարությունից և չի ճանաչում ոչ մի կապվածություն, ապա կարող է հայտնվել խելահեղության սահմանին, դառնալ հոգեկան հիվանդ: Նա կենդանի օրինակներով հաստատում է այս պնդումը: Է. Ֆրոմը ներկայացնում է ամերիկացի հոգեբան Գ. Ջիլբերտի փորձը, որը մեկ տարի շարունակ զրուցել է բանտակից նացիստական առաջնորդներից Հ. Գյորինգի հետ, որը մշտապես ասել է, որ ինքը մյուս վատ գործիչների նման չէ, նման չէ Հիտլերին, որը բազում կանանց ու երեխաների է սպանել: Գյորինգը խնդրել է հավատալ իրեն՝ պնդելով, որ ինքը նման բաներ չի արել: Է. Ֆրոմը ցույց է տալիս, որ մարդու ներքին խնդիրն է, երբ նա մնում է ինքն իր հետ միայնակ, գիտակցում է իր գործողությունների ահավորությունը և չի կարողանում հանդուրժել իր այդ վիճակը: Է. Ֆրոմը ներկայացնում է նմանատիպ մի պատմություն ևս, որը շարադրել է ամերիկացի մի լրագրող: Վերջինս որոշ ժամանակ ապրել է Մոսկվայում և հանդիպել ու զրուցել է Հ. Յագոդայի հետ (ԽՍՀՄ ՆԳԺԿ նախկին պետ), որը հարյուրհազարավոր մարդկանց սպանության պատասխանատուն էր: Լրագրողը պատմել է, որ Յագոդան հովանավորում էր Մոսկվայի մերձակայքում գտնվող մի մանկատուն, և իրեն խնդրել է, որ Նյու Յորքի որևէ ամսագրում որևէ նյութ հրատարակի իր որբանոցի մասին: Յագոդան ասել է, որ իր մայրն իրեն հրեշ է համարում, իսկ Նյու Յորքում ապրում է իր մորեղբայրը: Եթե մորեղբայրը որևէ ամսագրում կարդա իր բարի գործի մասին, անպայման կպատմի մորը, և ինքը իրեն թեթևացած կզգա: Է. Ֆրոմը եզրակացնում է, որ խնդիրը Հ. Յագոդայի ոչ մաքուր խիղճն է, որը հանկարծ արթնացել է, և նա այլևս չի կարողանում հանդուրժել իր կյանքի և վարքագ-

րանձնային կոնֆլիկտների պատճառները՝ նա որպես այդպիսիք առանձնացնում էր մարդու շահագործումը, ավտորիտարիզմը, ազահությունը, հարստության անհագ ձգտումը, որոնք պատճառ են դառնում, որ տնտեսական հարաբերությունները դուրս գան միայն արտադրական գործունեության շրջանակներից և տարածվեն կյանքի բոլոր ոլորտների վրա: Է. Ֆրոմն այդ ամենը դիտարկում էր որպես բուրժուական հասարակության սոցիալական հիվանդություններ, որոնք արտացոլվում են անհատի գիտակցության մեջ, երբ նա սկսում է մտածել «ունենալ», «տիրել» կատեգորիաներով և կորցնում է իր անհատականությունը¹: Հենց այս համատեքստում էլ նա քննադատում է նաև կրոնը, որը վերածվել է բյուրոկրատական կազմակերպության՝ նպաստելով անհատի ինքնամեկուսացմանը և անկարողության գիտակցության ամրապնդմանը: Այնինչ, կրոնը ներքին հիմքերով հումանիտար գաղափար է, որն իր ակունքներում օգնել է մարդկանց բացատրելու և հաղթահարելու սեփական անզորության գիտակցումն ու ամենատարբեր վախերը: Է. Ֆրոմը նկատում է, որ հոգևորականները հեռացել են իրենց նախնական դերից, ինչը նա նույնացնում էր հոգեբանի և հոգեբույժի դերին: Նախկինում միայն հոգևոր սպա-

ծի ողջ անմարդկայնությունը: Տե՛ս **Փրոմմ Է.**, *Догмат о Христе. Медицина и этическая проблема современного человека*, М., 1998, с. 145-146.

¹ «**Ունենալու**» սկզբունքի բանաձևը Է. Ֆրոմը ներկայացնում է «*Ես այն եմ, ինչ ունեմ*» ձևակերպումով: Սակայն այդ ձևակերպմանը նա առաջադրում է հարց՝ «Եթե ես այն եմ, ինչ ունեմ, ապա ո՞վ եմ ես այդ դեպքում», և պատասխանում. «Այդ դեպքում մարդը ոչ այլ ինչ է, քան ավերված, ամայացած մի մարդ: Եվ եթե մարդը կորցնի այն, ինչ ունի, ուրեմն նա կկորցնի հենց իրեն: Եվ նա սկսում է մտահոգվել, անհանգստանալ, վախենալ կորցնելուց, գողերից, տնտեսական փոփոխություններից, հեղափոխություններից, վախենում է սիրուց, ազատությունից, զարգացումից: Նրան անհանգստացնում է ոչ միայն իր առողջական վիճակը, այլև իր ունեցածը կորցնելու խնդիրը, և նա դառնում է ագրեսիվ, դաժան և իրեն ապահով զգալու համար ձգտում է ավելիին»: Այս սկզբունքին Է. Ֆրոմը հակադրում է «**լինելու**» բանաձևը՝ «*Ես այն եմ, ինչ ես կամ, և ոչ թե այն, ինչ ես ունեմ*: Ուստի ոչ ոք չի կարող սպառնալ իմ անվտանգությանը և զրկել ինձ նույնականության զգացումից»: Նա նկատում է, որ ունենալու սկզբունքի ժամանակ մարդու ուշադրությունը կենտրոնանում է արտաքին աշխարհի օբյեկտների վրա, իսկ լինելու սկզբունքի ժամանակ՝ հենց իր էության, իր հոգեկան աշխարհի վրա, և մարդն իր ուժերը ուղղում է իր զարգացմանն ու կատարելագործմանը: Եվ քանի որ մարդու գոյության կենտրոնը հենց իր մեջ է, ապա այն անհնար է կորցնել, հետևաբար և չկա անհանգստություն ու վախ...: Տե՛ս **Փրոմմ Է.**, *Иметь или быть*, СПб., 2016, с. 78-80.

սավորներն իրավունք ունեին «զբաղվելու» մարդու հոգու հարցերով, միայն նրանք են խոսել սիրո, ճշմարտության, արդարության իդեալների անունից: Որոշ մշակույթներում էլ, օրինակ՝ Եգիպտոսում, հոգևոր սպասավորները՝ քրմերը, հանդես են եկել որպես հոգին բժշկողներ և հոգուն սպեղանի դնողներ: Հին Հունաստանում այդ գործառույթը մասամբ իրականացրել են փիլիսոփաները՝ հոգալով մարդկային երջանկության և հոգու փրկության մասին: Հիմնվելով առողջ բանականության վրա՝ նրանք մարդուն համարում էին ուսումնասիրության կարևոր օբյեկտ և փիլիսոփայությանը կամ էթիկային նվիրված իրենց տրակտատներում առաջ էին քաշում նաև հոգեբանական հարցեր: Այս մշակույթը շարունակվում է նաև Վերածննդի ժամանակ և իր գագաթնակետին հասնում արդեն Լուսավորության դարաշրջանում: Լուսավորիչ-փիլիսոփաները պնդում էին, որ մարդը պետք է ազատ լինի ինչպես տգիտության և նախապաշարունների, այնպես էլ քաղաքական կապանքներից: Նրանք կոչ էին անում ոչնչացնել գոյության այն պայմանները, որոնք ծնում են պատրանքներ, քանի որ երջանկության նախադրյալները¹ մարդու ներքին ազատության մեջ են. ներքին ազատությունն է ապահովում հոգեկան առողջությունը: Այդ առումով էլ կարևորվում է հոգեվերլուծությունը, որը հնարավորություն է տալիս թափանցելու հիվանդի հոգու ամենամութ անկյունները՝ վեր հանելով նրա ամենաթաքուն ցանկություններն ու տագնապները: Փաստորեն, մարդու հոգու «բժշկության» խնդիրը միավորում է հոգեվերլուծությանը, փիլիսոփայությանն ու աստվածաբանությանը: Սակայն ո՛չ հոգեվերլուծաբանը, ո՛չ աստվածաբանը և ո՛չ էլ փիլիսոփան չեն կարող

¹ Իր ուսումնասիրություններում Է. Ֆրոմը անդրադառնում է նաև երջանկության և ուրախության զգացումներին՝ որպես մարդկային էությունը բացահայտող տարրերի. նա տարբերակում է հաճույքն ու ուրախությունը՝ նշելով, որ հաճույքը պատրանք է և կործանում տանող ամենակարճ ճանապարհը, որը մարդուն մղում է ցանկությունների անընդհատ բավարարման, մշտապես գրգռում է մարդուն, բայց երբեք ուրախություն չի պատճառում: Է. Ֆրոմը հաճույքը համեմատում է խարույկի հետ, որը շատ արագ բռնկվում է և նույնքան արագ էլ մարում, իսկ ուրախությունը, ոչ թե խարույկ է, այլ մի մոմ, որն այրվում է հանդարտ: «Ուրախությունը բարությունն է, և քանի որ մարդը բնույթով բարի է, հետևաբար նպատակին հասնելու համար պետք է գնալ ուրախության ճանապարհով և ոչ թե հաճույքների, որ հեռացնում է մեզ մեր իրական նպատակներից...», - գրում է նա: Տե՛ս **Փրոմմ Է.**, *Душа человека*, М., 1998, с. 33-38.

հասնել մարդու հոգեկան աշխարհի վերջնական բացահայտմանն ու ճանաչմանը: Այդ նպատակին հասնելու համար էլ միավորվում են կրոնն ու հոգեվերլուծությունը՝ դառնալով դաշնակիցներ, որոնք տեսական և գործնական գիտելիքներով պետք է փոխլրացնեն միմյանց: Այն փաստը, որ հոգևորականների զգալի մասը ուսումնասիրում է հոգեվերլուծություն, ցույց է տալիս, թե որքան է կարևորվում կրոն-հոգեվերլուծություն կապը նրանց մասնագիտական գործունեության ոլորտում: Այդ կապը կարևորելով էլ ուզում ենք չհամաձայնել այն տեսակետին, թե Ջ. Ֆրոյդը կրոնի թշնամին է, իսկ Կ. Գ. Յունգը՝ բարեկամը: Ջ. Ֆրոյդը կարծում էր, որ մարդկության զարգացման նպատակը այնպիսի իդեալների հասնելն է, ինչպիսիք են գիտելիքը, բանականությունը, ճշմարտությունը, սերը, տառապանքների թոթափումը, անկախությունն ու պատասխանատվության գիտակցումը: Այս իդեալները ընկած են բոլոր մեծ կրոնների հիմքում, դրանց բարոյական միջուկն են, որի վրա հիմնված են արևելյան և արևմտյան մշակույթները (Լաո-Յզիի, Բուդդայի, մարգարեների, Հիսուսի ուսմունքները¹): Այսինքն՝ Ջ. Ֆրոյդը մերժում էր կրոնը ոչ թե գաղափարական մակարդակում, այլ մերժում էր նրա դրսևորման արտաքին-հասարակական ձևը, մերժում էր հանուն էթիկայի՝ պաշտպանելով կրոնի բարոյական միջուկը: Սա մի մոտեցում է, որը ևս կարելի է անվանել «կրոնական»: Կ. Գ. Յունգը կարծում է, որ կրոններին ներհատուկ են առանձնահատուկ էմոցիաներ, ենթարկվածություն բարձրագույն ուժին. նա կրոնը հանգեցնում է հոգեբանական ֆենոմենի՝ միաժամանակ անգիտակցականը բարձրացնելով կրոնական ֆենոմենի մակարդակի²:

Անդրադառնալով կրոնի և հոգեվերլուծության բարդ հարաբերության մեկնաբանությանը՝ է. Ֆրոմը նշում է. «Հոգեվերլուծաբանը պարտավոր է հետազոտել մարդկային «իրականությունը», որը թաքնված է և՛

¹ Իհարկե, կրոնական այս գործիչների գաղափարներում կան որոշակի տարբերություններ շեշտադրումների տեսակետից: Օրինակ՝ Բուդդան կարևորում էր տառապանքներից ազատվելու նշանակությունը, մարգարեները՝ գիտելիքի նշանակությունն ու արդարությունը, Հիսուսը՝ եղբայրական սերը: Սակայն հատկանշական է, որ կրոնական այս ուսուցիչները համամիտ են մարդկության զարգացման ուղղության և բարոյականության նորմերի մասին եղած գաղափարների հարցում, նորմեր, որոնցով պետք է ղեկավարվի մարդը: Տե՛ս **Фромм Э.**, Психоанализ и религия/**Сумерки богов**, М., 1990, с. 155.

² **Նույն տեղում**, էջ 156:

կրոնի ներսում, և՛ ոչ կրոնական սիմվոլիկ համակարգերում: Հոգեվերլուծաբանի համար կարևորը այն չէ, թե մարդը կվերադառնա արդյոք դեպի կրոն և Աստված, այլ այն, թե մարդն ապրում է արդյոք սիրո մեջ և մտածում է արդյոք ճշմարտության մասին: Եթե դա այդպես է, ապա նրա կողմից կիրառվող սիմվոլիկ համակարգերը երկրորդական են, իսկ եթե ոչ, ապա դրանք ընդհանրապես նշանակություն չունեն»¹:

Հետաքրքրական է հոգեբանի այն համոզմունքը, որ մարդկային բնությունը ճանաչելու գործընթացում կրոնը բոլորովին էլ չի հակադրվում փիլիսոփայությանն ու հոգեբանությանը: Դրա հիման վրա էլ նա հավաստում է, որ **մարդ** երևույթը գնահատելու, նրա հոգևոր աշխարհը ճիշտ ընկալելու և հատկապես այն “բուժելու», նրա ներքին ուժերն ու հնարավորությունները բացահայտելու բարդ գործընթացում կրոնը, հոգեբանությունն ու փիլիսոփայությունը հանդես են գալիս գործընկերային դիրքերից, փոխլրացնում են իրար և ձգտում նույն նպատակին:

Այսպիսով, Է. Ֆրոմը, ընդհանուր գծերով շարունակելով հոգեվերլուծության ավանդական սկզբունքները, առաջիններից մեկը դարձավ, որ մարդկային վարքագծի կենսաբանական շարժառիթները դիտարկեց սոցիալական գործոնների համատեքստում՝ ցույց տալով, որ անձը, նրա կրքերն ու տազնապները մշակույթի արդյունք են: Այս տեսանկյունից ևս նա՝ որպես նեոֆրոյդիզմի և ֆրոյդամարքսիզմի հիմնադիրներից մեկը, համառորեն և հետևողականորեն պայքարել է անհատի տոտալիտարիզմի կապանքներից ազատագրման համար, հաստատել է համամարդկային արժեքների հավերժականությունը և անսասանությունը:

Է. Ֆրոմի ավտորիտար և հումանիստական կրոնի հայեցակարգը ներկայացնելիս նախևառաջ պետք է նկատել, որ նա փորձում է առանձնացնել և բնորոշել իր համար առավել նշանակալի հանդիսացող ավտորիտար և հումանիստական կրոնների միջև եղած տարբերությունները: Է. Ֆրոմը տարբերակում է կրոնի և կրոնական փորձի այն տիպերը, որոնք իր համար հետաքրքիր էին հոգեբանության տեսակետից: Ավտորիտար կրոններում Աստված ուժի և իշխանության խորհրդանիշն է, քանի որ օժտված է գերագույն իշխանությամբ, իսկ մարդն անզոր է: Հաճախ ավտորիտար կրոնները շեշտում են վերացական և հեռավոր գաղափարներ, որոնք կապ չունեն իրական մարդկանց, իրական կյանքի հետ, այն-

¹ **Նույն տեղում**, էջ 149:

պիսի գաղափարներ, ինչպիսիք են, օրինակ, “կյանք մահից հետո», “մարդկության լավագույն ապագա», հանուն որի կարելի է զոհաբերել նաև մարդկային կյանքն ու երջանկությունը: Ըստ վերլուծաբանների՝ “Հումանիստական կրոնը, ընդհակառակը, իբրև կենտրոն ընտրում է մարդուն և նրա ուժերը: Մարդը պարտավոր է զարգացնել իր բանականությունը, որ հասկանա ինքն իրեն, իր վերաբերմունքն ուրիշների հանդեպ և իր տեղը տիեզերքում: Նա պետք է հասնի ճշմարտության և զարգացնի սերը թե՛ իր և թե՛ ուրիշների հանդեպ: Նա պետք է ունենա սկզբունքներ ու նորմեր, որոնք նրան պետք է տանեն դեպի նպատակը: Նման տիպի կրոնում կրոնական փորձը բոլորի հետ միասնականության ապրումն է, որը հիմնվում է մարդու կրոնական աշխարհի հետ, կապվածության, սիրո վրա: Հումանիստական կրոնում մարդու նպատակը բարձրագույն ուժի և ոչ թե բարձրագույն անզորության հասնելն է»¹:

Ըստ Ն. Կապուստինի՝ ավտորիտար կրոնը մարդու կողմից ինչ-որ բարձր և անտեսանելի ուժի ընդունումն ու ճանաչումն է, ուժ, որը կառավարում է մարդու ճակատագիրը և պահանջում է հնազանդություն, երկրպագում և խոնարհում: Այստեղ կարևորվում է այն, որ մարդուն կառավարում է տիեզերքի սահմանից դուրս գտնվող մի ուժ, իսկ այն ավտորիտար է դարձնում այն գաղափարը, որ այդ ուժը, տիրելով մարդուն, լիազորված է պահանջելու «հնազանդություն», “պաշտամունք» և «երկրպագություն»²: Ի տարբերություն ավտորիտար կրոնների՝ հումանիստական կրոնները աստվածակենտրոն են, և Աստված նրանցում չի կապվում բռնության և մարդու վրա ունեցած իշխանության հետ, այլ խորհրդանշում է հենց մարդկային ուժերը, որոնք դրսևորվում են կյանքում: Հումանիստական կրոնների օրինակ են դառնականությունը, Եսայու, Հիսուսի, Սոկրատի, Սպինոզայի ուսմունքները, հրեական և քրիստոնեական ուսմունքները և այլն: Հումանիստական կրոնի լավագույն օրինակներից է վաղ բուդդայականությունը: Բուդդան մեծ ուսուցիչ էր, նա այն “պայծառության հասածն» էր, որ հասավ մարդկային կեցության ճշմարտության բացահայտմանը: Նա խոսում էր ոչ թե գերբնական ուժի, այլ բանականության անունից և կոչ էր անում բոլոր մարդկանց օգտագործել սեփական բանականությունը և տեսնել ճշմարտությունը, որն առաջինը կարո-

¹ Рязанов Е. В., Психология религии, М., 2005, с. 40.

² Ст'ю Капустин Н. С., Особенности эволюции религии, М., 1984, с. 222.

ղացել էր տեսնել հենց ինքը՝ Բուդդան: Եթե մարդն առաջին քայլն է անում դեպի ճշմարտությունը, նա պետք է ձգտի ապրել՝ զարգացնելով բանականության կարողությունները, սիրո զգացմունքը մարդկային բոլոր էակների հանդեպ: Եվ միայն այդ ամենը հաջողելուց հետո մարդ կարող է իրեն ազատագրել իռացիոնալ կրքերի ցանցից: Բուդդայականությունը սահմանում է, որ չնայած մարդը պետք է ճանաչի իր հնարավորությունների սահմանները, բայց նաև պետք է գիտակցի և ճանաչի սեփական ուժերը: Բուդդայականության հիմքում ընկած նիրվանայի հայեցակարգը՝ իբրև գիտակցության լիակատար պայծառացման վիճակ, ոչ թե անզորության և հնազանդության հայեցակարգ է, այլ, ընդհակառակը, մարդկային բարձրագույն ուժերի զարգացման հնարավորություն¹:

Է. Ֆրոմի տեսական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում այն, ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են կրոնի մեջ օտարման և պատրանքների (իլյուզիաների) հիմնախնդիրներին, որոնք հեղինակը բացատրում է հուդայականության և բուդդայականության օրինակներով և ցույց տալիս, որ դրանց հիմքում ընկած է գոյության պատրանքներից և օտարումից ազատագրվելու հիմնադրույթը: Ձեն-բուդդայականության կրոնական աշխարհայացքում է. Ֆրոմը նախևառաջ տեսնում է մարդկային գիտակցության ուղղված հումանիստական կոչ՝ հրաժարվելու պատրանքներից, հորինված հեղինակությունների իշխանությունից, օտարումից: Գիտնականի համար բուդդայականությունը ռացիոնալ կրոնական համակարգ է, որ մատնանշում է մարդկային հնարավորությունների ճշմարիտ իրացման ուղին: Քննելով անհայտ լուրերի պատճառով ձևավորված վախի հիմնախնդիրը՝ Է. Ֆրոմը որպես վերլուծական հետազոտման օրինակ ներկայացնում է Բուդդայի մասին պատմություններից մեկը², որը նաև լիարժեքորեն բացահայտում է Բուդդայի սերն ու հար-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Փրոմմ Է.**, Психоанализ и религия, с. 169.

² Բուդդայի մասին տարածված գրույցներից մեկում պատմվում է, որ մի անգամ մի ճագար քնած է լինում մանգոյի ծառի տակ և հանկարծ վեր է թռչում ուժեղ ձայնից: Սարսափած այդ աղմուկից՝ ճագարը մտածում է, որ հասել է աշխարհի վերջը և սկսում է խելակորույս փախչել: Տեսնելով դա՝ մյուս ճագարները հարցնում են, թե ինչ է պատահել, և լսելով, որ աշխարհի վերջն է, իրենք էլ են սկսում վազել: Փախչող ճագարներին տեսնում է եղջերուն, և իմանալով, որ աշխարհի վերջը մոտ է, ինքն էլ է սկսում նրանց հետ վազել: Եվ այսպես անտառի բոլոր կենդանիները, հետևելով իրար, սկսում են խելահեղորեն վազել: Այդ ժամանակ իր գոյության ձևերից մեկում գտնվող Բուդդան տես-

գանքը կենդանական աշխարհի բոլոր արարածների նկատմամբ, նրա՝ աշխարհի ռացիոնալ ըմբռնումն ու վստահությունը մարդկային ուժի հանդեպ:

Հումանիստական կրոնների շարքում, բուդդայականությունից բացի, Է. Ֆրոմը առանձնահատուկ կարևորություն է տալիս նաև քրիստոնեությանը՝ նկատելով, որ վաղ քրիստոնեության հումանիստական, այլ ոչ թե ավտորիտար ուսմունք լինելը ակնառու է Հիսուսի խոսքերում, ինչի ամենավառ արտահայտությունն է՝ *«Աստուծո թագավորությունը մեր ներսում է»*: Սակայն Հիսուսից մի քանի հարյուր տարի անց քրիստոնեությունը աղքատ և պարզ երկրագործների, արհեստավորների և ստրուկների կրոնից վերածվեց Հռոմի կայսերական իշխանության և նրա ներկայացուցիչների կրոնի, և նրանում գերիշխող դարձավ ավտորիտար դառնալու միտումը: Հումանիստական և ավտորիտար սկզբունքների պայքարը քրիստոնեության մեջ դարձավ Պելագիոսի և Օգոստինոսի, կաթոլիկների և հերետիկոսների բախման, ինչպես նաև բողոքականության ներսում ձևավորված տարբեր աղանդների միջև կոնֆլիկտի պատճառ¹:

Ըստ Է. Ֆրոմի՝ քրիստոնեությունը հասկանալու յուրաքանչյուր փորձ պետք է սկսել առաջին քրիստոնյաների հասարակական-տնտեսական-մշակութային կյանքի, ինչպես նաև նրանց հոգեբանական յուրահատկությունների ուսումնասիրությունից, իսկ այդ համատեքստում պարզ է, որ քրիստոնեության՝ որպես հումանիստական կրոնի ծագումն այդ միջավայրում բնական էր, քանի որ հռոմեական տիրապետության տակ գտնվող Պաղեստինում տնտեսական ճգնաժամի, աղքատության և հասարակական շերտավորվածության մեջ գտնվող ժողովուրդը ձգտում էր

նում է, որ կենդանիները փախչում են, և հարցնում է պատճառը: Լսելով, որ աշխարհի վերջն է մոտենում, Բուդդան ասում է, որ դա ճիշտ չէ, և աշխարհը դեռ չի մոտեցել իր վախճանին: Ապա փորձում է հասկանալ, թե ով է այդ լուրը տարածել, և բոլոր կենդանիներին հարցնելով՝ հասնում է եղջերուին, ապա՝ ճագարներին, և վերջապես՝ առաջին ճագարին: Բուդդան հարցնում է, թե նա որտեղ էր և ինչ էր անում այդ պահին, երբ հասկացավ, որ աշխարհի վերջն է մոտենում: Իմանալով, որ ճագարը քնած է եղել մանգոյի ծառի տակ և վեր է թռել մի սոսկալի աղմուկից, Բուդդան եզրակացնում է, որ ճագարը վախեցել է ծառից ընկնող պտուղի ձայնից, և ապա կենդանիների հետ գնում է ծառի մոտ, և պարզում է, որ, իրոք, ծառից մանգոներ են թափվել, և այդ ձայնն էլ վախեցրել էր ճագարին: Տե՛ս **նույն տեղում**, էջ 169-170:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **նույն տեղում**, էջ 92:

գլոբալ փոփոխությունների: Այդ ժամանակ տարածված քաղաքական-կրոնական տարբեր խմբեր, ինչպիսիք էին փարիսեցիները, սադուկեցիները և այլն, այդ շերտավորումների արտահայտությունն էին¹: Ֆրոմմ իրավացիորեն նկատում է, որ հասարակական-քաղաքական-տնտեսական աճող շահագործումը հանգեցրեց այն բանին, որ սոցիալապես ճնշված, մերժված մարդիկ անհամբեր սպասում էին տիրող պայմանների փոփոխությանը, երազում էին ավելի երջանիկ ժամանակների մասին: Հասարակությունը լցված էր ատելությամբ և վրեժխնդրությամբ թե՛ սեփական, և թե՛ հոռմեական կառավարիչների հանդեպ: Հենց այս ամենով էլ բացատրվում է այն, որ վաղ քրիստոնեությանը բնորոշ են եղել վախճանաբանական և փրկագործական պատկերացումները, սպասումը աշխարհի վերջին, ձգտումը տիրող կարգերի կործանմանը, համաշխարհային նոր կարգերի ձևավորման հույսերը, կարգեր, որոնք երկրի վրա երկնային արքայություն կհաստատեին²: Հոգևոր և քաղաքական իշխանությունների հանդեպ ատելությունը դարձավ վաղ քրիստոնեական համայնքի հասարակական-քաղաքական էությունը: Այդ համայնքին արդեն չէր բավարարում կառավարողների սիրալիր վերաբերմունքը. մարդիկ դարձել էին քաղաքական և ռազմական մարտիկներ, որոնք ատում էին «ազգի հայրերին», որոնց միայն իշխանության հասնելն ու սեփական շահերը պաշտպանելն էր հետաքրքրում:

Այդ շրջանում կար միայն մեկ շարժիչ ուժ՝ տառապող զանգվածի ատելությունն ու հույսը, որն ավելի էր խորանում և ներթափանցում հասարակության ցածր շերտերի մեջ: Հենց այս շերտերի հոգեվերլուծական մեկնաբանությունը ցույց է տալիս, որ այդ մարդիկ հույս ունեին բարի Հոր՝ Աստծո հավատի օգնությամբ փոխելու իրենց կյանքի պայմանները և ազատվելու կառավարիչներից, հարուստներից ու փարիսեցիներից, որոնք բոլորը կպատժվեն ահեղ դատաստանի օրը: Է. Ֆրոմմը մատնանշում է. «Մեր առջև երկակի վերաբերմունք է. այդ մարդիկ երազանքներում սիրում էին բարի Հորը, որը պիտի օգներ և օժանդակեր նրանց, և ատում էին չար Հորը, որը հարստահարում, ճնշում և տանջում էր նրանց: Քրիստոնեությունը՝ իբրև պատմական փրկչահեղափոխական շարժում, ձևավորվեց և զարգացավ հենց այդ աղքատ և անուսում հեղափոխական

¹ Տե՛ս **Фромм Э.**, Догмат о Христе, с. 30-31.

² Տե՛ս **նույն տեղում**, էջ 36:

զանգվածի միջավայրում»¹:

Նոր կյանքի ձգտումը հիմնվում էր այն գաղափարի վրա, որ տիրող իրավիճակը անցողիկ է. հենց այդ գաղափարաբանական հիմքի վրա էր ձևավորվում նաև Հիսուսի ուսմունքը, համաձայն որի՝ պետք է հրաժարվել երկրային բարիքներից, քանի որ վերջը մոտ է, թեև ոչ ոք չգիտի դրա օրն ու ժամը²: Հենց այդ համոզմունքն էր պատճառը, որ վաղ քրիստոնեության շրջանում քրիստոնեական առաջին համայնքը դարձավ աղքատների «ազատ եղբայրություն», որն ինչ-որ կառույցների կամ հաստատությունների կարիք չուներ:

Է. Ֆրոմը նշում է, որ եթե շահագործվող մյուս խմբերը հույսն իրենց վրա էին դնում՝ հավատալով, որ իրենց սեփական ուժերով կարող են հասնել քաղաքական և հասարակական փոփոխությունների, ապա վաղ քրիստոնյաներն իրենց հայացքը ուղղում էին միայն դեպի նոր դար և նոր իրադարձություններ խոստացող փրկիչը՝ Հիսուսը, որը մարդ էր և Աստծո որդի: Հիսուսը հրաշքներ էր գործում, ինչն ապացուցում էր, որ նա ուղարկված է Աստծո կողմից, և այդ հրաշքները հենց Աստված է կատարում Հիսուսի միջոցով: Այսպիսով, Է. Ֆրոմը նկատում է, որ Հիսուսը վաղ քրիստոնյաների կողմից ընկալվում է իբրև «մեսիա», որը հետո դարձավ «Աստծո որդի»: Է. Ֆրոմը գրում է. «Վաղ քրիստոնեության այս քրիստոսաբանությունը շատ առումներով հիշեցնում է Աստծո ընտրյալ մեսիայի հայեցակարգը, մեսիա, որը վաղուց հայտնի էր հրեական լայն զանգվածներին, և գալու է սեր և արդարություն հաստատելու: Նոր հավատի երկու գաղափարներում մենք գտնում ենք նոր տարրեր. հարություն առնելուց հետո Հիսուսն իբրև Աստծո որդի բազմում է Աստծո աջ կողմում, բայց որպես մարդ նա նման չէ բոլոր մյուս հերոսներին, օրինակ՝ Մովսեսին, այլ պարզապես մի մարդ է, որն արժանապատվորեն կրում է իր տառապանքները և մեռնում խաչի վրա: Մեռնող մեսիայի կամ անգամ մեռնող Աստծո գաղափարը բոլորովին էլ նոր չէր ժողովրդի համար»³:

Է. Ֆրոմը նշում էր, որ հրեական էզոթերիկ սովորույթներում ևս խոսվել է մեռնող Աստծո կամ մեռնող մեսիայի մասին: Սակայն այս բոլոր

¹ **Նույն տեղում**, էջ 38:

² **Տե՛ս նույն տեղում**, էջ 43:

³ **Փրոմմ Է.**, *Догмат о Христе*, М., 1998, с. 49.

նախկին գաղափարները չեն կարող բացատրել այն հսկայական ազդեցությունը, որ ունեցավ հրեական հասարակության վրա խաչված և տառապող փրկչի ուսմունքը: Վաղ քրիստոնեական համայնքներում, առաջին քրիստոնյաների քարոզներում Հիսուսը մարդ էր, որն իր մահից հետո միայն մեծարվեց որպես Աստված. նա շուտով պիտի վերադառնա, դատաստան անի, երջանկացնի տառապյալներին և պատժի կառավարողներին: Ինչպես իրավամբ նշում է հոգեվերլուծաբան Թ. Ռայկը. «Մեր առաջ խոռվարար որդու հնագույն առասպելն է, հոր հանդեպ ունեցած թշնամական տրամադրությունների արտահայտությունը: Առաջին քրիստոնյաները ամբողջ հոգով ասում էին կառավարողներին, իսկ վերջիններս նրանց հակադրում էին իրենց «հայրական իշխանությունը»: Դրանք քահանայապետեր, դպիրներ, գիտնականներ ու արիստոկրատներ էին, որոնք խլել էին հասարակ մարդկանցից կյանքի ուրախությունները և այդ մարդկանց էմոցիոնալ աշխարհում խաղում էին դաժան, արգելող, ահաբեկող, կտտանքների ենթարկող հոր դերը»¹: Եվ մարդիկ պետք է ասեին նաև նրանց Աստծուն, որն այդ շահագործողների դաշնակիցն էր և թույլ էր տալիս, որ նրանք շահագործեն: Եվ ահա, հասարակ մարդիկ նույնպես ուզում են լինել տերեր, կառավարիչներ, բայց դա անհնար էր իրական կյանքում, քանի որ իրականության մեջ նրանք չէին կարող տապալել տիրող իշխանություններին, ոչնչացնել ներկա տերերին: Ուստի նրանց ցանկությունները բավարարվում էին միայն երևակայության մեջ: Մարդկանց շոշափելի ատելությունը խորանում էր միայն իշխանությունների հանդեպ, սակայն ոչ Աստծո «վեհ» պատկեր-կերպարի հանդեպ: Ենթագիտակցական ատելությունը աստվածային Հոր հանդեպ իր արտահայտությունը գտավ Քրիստոսի հանդեպ ձևավորված հավատում: Նրանք մարդուն դրեցին Աստծո կողքին և դարձրին Հայր Աստծուն հավասար համակառավարիչ: Քրիստոսը դառնում է Հայր Աստծո հանդեպ մարդկանց անգիտակցական ատելության խորհրդանիշը. եթե մարդը կարող է դառնալ Աստված, ապա ազատվում է նրա հովանավորությունից՝ ինքն էլ ընկալվելով որպես բացարձակ ուժ: Աստծո աստիճանի բարձրացած մարդու հանդեպ հավատը դարձավ մի անգիտակից ցանկություն, որով աստվածային Հորը ուզում էին տապալել: Դա ամրապնդվում էր նաև այն մեծ հույսով, որ շուտով սկսվելու է նոր դար, երբ

¹ Նույն տեղում, էջ 50-51:

բոլոր մերժվածներն ու տառապյալներն իշխանություն կստանան և երջանիկ կլինեն:

Կարող ենք փաստել, որ Է. Ֆրոյդը կրոնը դիտարկում է անհատի և հասարակության հումանիստական հայեցակարգերը բացահայտելու նպատակներից ելնելով, քննարկում և առաջադրում է այն խնդիրը, թե որքանով է կրոնը նպաստում կամ խոչընդոտում անձի զարգացմանը և մենությունը, տագնապը, օտարումը հաղթահարելուն, և գալիս է այն եզրահանգման, որ կրոնը մարդու համար կողմնորոշման համակարգի դեր և գործառույթ ունեցող պահանջմունք է, մարդու ներաշխարհի անբաժանելի մաս: Եվ հենց այս տեսանկյունից էլ հոգեվերլուծաբանը կրոնի լույսի ներքո անդրադառնում է հասարակական-փիլիսոփայական հիմնախնդիրների վերլուծությանը, որի անկյունաքարը անձի տեսությունն է և ինքնատիպ հոգեվերլուծությունը: Է. Ֆրոյդի սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմատիկայի հիմքում կրոնն է, որի մեջ փորձում է վեր հանել անհատի սոցիալական և հոգեբանական գործոնների դերը: Վերլուծության ենթարկելով վաղ քրիստոնեության սոցիալ-հոգեբանական միջավայրն ու մթնոլորտը՝ նա եզրակացնում է. նախ՝ հոգեկան-հոգեբանական իրողությունները պետք է դիտարկվեն հասարակական պայմանների և իրողությունների հետ միասնական կապի մեջ, ինչը նշանակում է, որ մարդկանց հոգեբանության փոփոխությունները պայմանավորված են հասարակական փոփոխություններով: Այնուհետև Է. Ֆրոյդը նշում է, որ կրոնական ուսմունքի վերլուծության մեջ կարևոր դեր է խաղում անգիտակցական տարրը¹, իսկ 1-3-րդ դարերում քրիստոնեական դավանանքի զարգացման մեջ տեղ գտած փոփոխությունները պայմանավորված էին ան-

¹ Անգիտակցականը հոգեկան կառույցի անբաժանելի տարր է, կյանքի աղբյուր և շարժիչ ուժ, վարքի մոտիվացիա, որն անփոխարինելի տեղ ունի մարդու կենսագործունեության համար: Ըստ Զ. Ֆրոյդի՝ անձի հոգեկանը կազմված է 3 գլխավոր համակարգերից՝ **Նա** (կամ **Id** – անգիտակցական), **Ես** (կամ **Ego** – գիտակցական) և **Գեր Ես** (**Super-ego** – մարդու ներքին ցենզոր, բարոյական գիտակցություն, խիղճ, իդեալներ): Անգիտակցականը բնածին և ժառանգական հակումների ամբողջությունն է, նրա հնագույն և իրական շերտը, որը, առաջնորդվելով «հաճույքի սկզբունքով», պահանջում է անմիջական բավարարում: Այդ տեսանկյունից **Ես**-ը ամբողջությամբ չի ներառում **Նա**-ն, այլ միայն մակերեսորեն է ծածկում այն: Բայց այդ երկու տարրերը կտրուկ սահմանազատված չեն, և որտեղ առկա է **Նա**-ն, այնտեղ պետք է լինի նաև **Ես**-ը: Տե՛ս **Սարգսյան Գ.**, Կրոնի հոգեվերլուծության. Զ. Ֆրոյդի հայեցակարգը, Ե., 2015, էջ 9:

գիտակցական ոլորտում տեղի ունեցող փոփոխություններով. կրոնը հատուկ անգիտակցական հոգեկան իրողություն է, որն ունի մշակութային համատեքստ: Քննելով կրոնի և անգիտակցականի փոխկապակցվածությունը՝ Է. Ֆրոմը հանգում է այն եզրակացության, որ 1-3-րդ դարերում քրիստոնեության մեջ ընթացող փոփոխությունները բխում են անգիտակցական ոլորտի փոփոխություններից և դրանց ուղիղ հետևանքն են (ճնշում, դասակարգային թշնամանք, ատելություն, հեղափոխական տրամադրություններ ևն): Քրիստոնեության տարածումը հասարակության տարբեր խավերում հանգեցրեց քրիստոնեական դավանաբանության շերտավորման: Մի կողմից՝ կրթված վերնախավը ստեղծում էր քրիստոնեության փիլիսոփայությունը և աստվածաբանությունը, որը երբեմն հասկանալի չէր հավատացյալների մեծամասնությանը, մյուս կողմից՝ բնակչության ստորին խավերը, հետևելով տեղական ավանդություններին և իրենց հավատալիքներին, հեթանոսական պատկերացումներ էին ներմուծում քրիստոնեության մեջ, հեթանոսական աստվածներին բնորոշ գծեր միացնում քրիստոնեական Աստծո կերպարին:

Վաղ քրիստոնեության ուսմունքի Ֆրոմյան վերլուծությունը բացահայտեց կրոնական հոգեբանության խորքային շերտերը, մատնանշեց սոցիալականի և անհատական-հոգեբանականի փոխկապակցվածությունը, համատեղեց սոցիալական փիլիսոփայությունն ու հոգեվերլուծությունը, լույս սփռեց քրիստոնեական դավանաբանության զարգացման առանձնահատկությունների վրա:

Հետագայում Է. Ֆրոմը անդրադարձավ նաև բողոքականության և միջնադարյան կրոնական ճգնաժամի վերլուծությանը և հանգեց այն մտքին, որ անհատը մնացել էր միայնակ ու մեկուսի, և բողոքականությունը առաջ բերեց ոչնչացման զգացումը և քանդեց քրիստոնեական ավանդական հավատը սիրո և գթասրտության արտահայտություն հանդիսացող Աստծո հանդեպ: Ռեֆորմացիայի գաղափարների ազդեցությամբ մարդը սովորեց ատել և չհավատալ ո՛չ իրեն, ո՛չ էլ մյուսներին և դարձավ միայն որոշակի նպատակների հասնելու միջոց: Բողոքականության ձևավորած նոր պատկերացումները դարձան կապիտալիզմի զարգացման հիմք, քանի որ մարդն ինքն է ձգտում դեպի աշխատանքը և պատրաստ է իր կյանքը վերածելու գործիքի՝ տնտեսական աճի հասնելու համար: Է. Ֆրոմը ցույց տվեց, որ կրոնը, խարսխված լինելով մարդու սոցիալական կեցության պայմանների վրա, կարող է դիտարկվել հոգեկան ի-

րողությունների և սոցիալական պայմանների միասնության մեջ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ըստ Է. Ֆրոմի՝ կրոնը մշակույթի անհրաժեշտ տարր է, որը մարդու անձնական և հասարակական կյանքում բարոյականության, արվեստի, աշխարհի հոգևոր-գործնական յուրացման այլ ձևերի հետ մեկտեղ իրականացնում է հասարակական կարևոր գործառույթներ:

Բանալի բառեր՝ ռադիկալ-հումանիստական հոգեվերլուծություն, էկզիստենցիալ դիֆերենցիալ, օտարման սինդրոմ, ավտորիտար և հումանիստական կրոն:

РЕЛИГИОЗНО-ЭТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ В ГУМАНИСТИЧЕСКОЙ ПСИХОАНАЛИТИЧЕСКОЙ ТЕОРИИ В Э. ФРОММА

Гоар Саркисян

Ключевые слова: радикально-гуманистический психоанализ, экзистенциальная дихотомия, синдром отчуждения, авторитарная и гуманистическая религия.

Религия в концепции Э. Фромма, имеет тройную функцию: для всего человечества – утешение за лишение судьбы, для большинства людей – побуждение к эмоциональному принятию их классового положения, а для доминирующего меньшинства – облегчение чувства вины, вызванного страданиями тех, кого они угнетают. Учение о религии является важной частью социальной философии Э. Фромма.

Помимо всего, религия представляет собой выражение экзистенциальной потребности в системе ориентации и объекте поклонения. Расширяя психоаналитическую теорию, Фромм признавал также ведущую роль социальных факторов в процессе формирования личности. Анализируя условия существования человека в исторической перспективе, философ делал вывод о фундаментальных проблемах человеческой цивилизации наших дней, заключающихся в чувствах одиночества, бессилия, отчужденности и тревоги.

Социально-психологический анализ раннего христианства приводит Фромма к следующим выводам: изменения в психологии людей обусловлены социальными детерминантами, и поэтому Фромм вскрывает глубокие пласты религиозной психологии, показывает взаимосвязь социального и индивидуально-психологического факторов.

RELIGIOUS AND ETHICAL PROBLEMS IN FROMM'S HUMANISTIC PSYCHOANALYTIC THEORIES

Key words: *humanistic psychoanalysis, existential dichotomy, alienation/isolation syndrome, authoritarian and humanistic religion*

Religion in Fromm's concept has a threefold function; for all mankind - a consolation for the hardships of fate, for most people - an incentive to emotionally accept their class position, and for the dominant minority - a relief from the feeling of guilt caused by the suffering of those whom they oppress. The doctrine of religion is an important part of Fromm's social philosophy. Above all, religion is an expression of an existential need for a system of orientation and an object of worship. Expanding psychoanalytic theory, Fromm also recognized the leading role of social factors in the process of personality/identity formation. Analyzing the conditions of human existence in a historical perspective, the philosopher drew a conclusion about the fundamental problems of human civilization nowadays, consisting in feelings of loneliness, powerlessness, alienation and anxiety. The socio-psychological analysis of early Christianity leads Fromm to the following conclusions: changes in the psychology of people are due to social determinants, and therefore Fromm reveals deep layers of religious psychology, shows the relationship between social and individual - psychological factors.